ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՀՐԱՎԵՐ

Հարգելի՛ գործընկերներ,

Հայաստանի ազգային գրադարանը հրավիրում է Ձեզ **«Ժառանգության պահպանություն՝ հանուն կայուն ապագայի»** խորագրով միջազգային գիտաժողովին՝ նվիրված Հայաստանի ազգային գրադարանի հիմնադրման 105-ամյակին։

Գիտաժողովը միտված է միավորելու ոլորտի առաջատար և երիտասարդ մասնագետներին ամբողջ աշխարհից՝ դառնալով հարթակ գրադարանային, թանգարանային, արխիվային, հրատարակչական և հարակից ոլորտների միջազգային փորձի փոխանակման, արդի խնդիրների քննարկման, նորարարությունների ներկայացման, ինչպես նաև ընդունված միջազգային ձևաչափերի, կառավարման համակարգերի, տեխնոլոգիաների ներդրման փորձառության համար։

- ✓ Գիտաժողովի անցկացման ժամանակահատված՝ **հոկտեմբերի 3-5-ը, 2024 թ.**
- ✓ Գիտաժողովի անցկացման վայր՝ **Երևան, Հայաստանի Հանրապետություն**
- ✓ Գիտաժողովի կազմակերպիչ՝ **«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ**
- ✓ Գիտաժողովի թեմատիկ ուղղություններ՝

1. **Ազգային ժառանգության պահպանություն**
   - Մշակութային ժառանգության դիվանագիտություն
   - Թվային մշակույթի պահպանություն և հանրահռչակում
   - Հայ տպագիր ժառանգության պահպանություն և հանրահռչակում
   - Սփյուռքի ժառանգության պահպանություն և հանրահռչակում
   - Թվային մշակութային հիշողությանն առնչվող նախաձեռնություններ
   - Թվայնացում
   - Տեսածրման խնդիրներ
   - Ազգային գրադարանային հավաքածուի պատմությունից
   - Թվային Ազգային գրադարանային հավաքածուի ձևավորման իրավական հարցերը աշխարհում
   - Հրատարակիչ-Ազգային գրադարանային հավաքածու. երկխոսություն
   - Ազգային գրադարանային հավաքածուի ձևավորման ներկա ու ապագա մարտահրավերները և հնարավորությունները

2. **Թվային բովանդակության կառավարում**
   - Տեղեկատվության կառավարում
   - Տեղեկատվական տեխնոլոգիաներ
   - Մեծ տվյալներ
   - Հանրահասանելի տվյալներ
   - Հանրահասանելիություն
   - Հանրահասանելի գիտություն
   - Հանրահասանելի կրթական աղբյուրներ
   - Բաց կոդերով ծրագրային ապահովում
   - Թվային լրագրություն
   - Թվային հասանելիություն
   - Բովանդակության վերլուծություն և հասանելիություն
   - Բովանդակության գնահատում

3. **Մատենագիտություն**
    - Ազգային մատենագիտություն
    - Գրացուցակավորում
    - Մետատվյալներ
    - Համակցված տվյալներ
    - Օրինակելի/հեղինակավոր գրառումներ

4. **Կառավարում**
    - Կառավարում և մարքեթինգ
    - Ֆոնդի համալրում, թարմացում և ընդլայնում
    - Հնատիպ, հազվագյուտ գրքեր և անհատական հավաքածուներ
    - Վիճակագրություն և գնահատում
    - Համագործակցություն
    - Ճգնաժամային կառավարում արտակարգ իրավիճակների պայմաններում
    - Ասոցիացիաների և կոնսորցիումների կառավարում
    - Շենքեր և սարքավորումներ

5. **Ծառայություններ**
    - Փաստաթղթերի առաքում և տվյալների փոխանակում
    - Միջգրադարանային բաժնույթ
    - Տեղեկատու ծառայություններ
    - Ծառայություններ բազմամշակույթ հանրության համար
    - Աջակից (ներառականությանը միտված) ծառայություններ

6. **Մասնագիտական զարգացում**
    - Կրթություն և մասնագիտական վերապատրաստում
    - Տեղեկատվական գրագիտություն
    - Թվային գրագիտություն
    - Շարունակական մասնագիտական զարգացում և ուսուցում աշխատավայրում

7. **Փաստաթղթերի պահպանություն, խնամք և վերականգնում**

8. **Հեղինակային իրավունք և ոլորտին առնչվող իրավական հարցեր**

9. **Ընթերցանության խթանում**
    - Գրագիտություն և ընթերցանություն
    - Գեղարվեստական թարգմանություն
    - Տեսալսողական միջոցներ և մուլտիմեդիա
    - Բարձրաձայն ընթերցանություն
    - Գրքարվեստ
    - Ընթերցվող կին գրողներ
    - Ընթերցանության մեթոդաբանություն
    - Մատչելի ձևաչափերով գրականություն

✓ Գիտաժողովի աշխատանքային լեզուներն են՝

- **հայերեն**
- **անգլերեն**
- **ռուսերեն**

Գիտաժողովն իրականացվելու է համաժամանակյա թարգմանությամբ։

Գիտաժողովին զեկուցումով մասնակցելու համար (առկա կամ հեռավար) անհրաժեշտ է լրացնել մասնակցության հայտը *(տե՛ս հավելված 1)* և ուղարկել nlaconference2024@gmail.com էլեկտրոնային հասցեին **մինչև 2024թ.-ի ապրիլի 1-ը** *(տե՛ս հավելված 2)*։

Գիտաժողովի մասնակցության ճանապարհածախսը և գիշերակացը հոգում է գործուղող կողմը։

Գիտաժողովին մասանկցությունը անվճար է։

Գիտաժողովի զեկուցումների ամփոփումները կհրապարակվեն ժողովածուում, որին առնչվող բոլոր ծախսերը կհոգա Հայաստանի ազգային գրադարանը։ Զեկուցումները հոդվածների տեսքով կհրապարակվեն «Բանբեր Հայաստանի գրադարանների» գիտամեթոդական հանդեսում, որը ինդեքսավորվում է EBSCO միջազգային հարթակում։ Հոդվածներին անվճար կտրամադրվի օբյեկտի թվային նույնականացուցիչ (DOI)։

Կազմկոմիտեն կարող է մերժել գիտաժողովի թեմատիկ ուղղություններին չհամապատասխանող մասնակցության հայտերը։

Գիտաժողովի երրորդ օրը նախատեսվում է մշակութային ծրագիր՝ միտված ծանոթացնելու մասնակիցներին Հայաստանի բազմադարյա պատմամշակութային ժառանգությանը։

Գիտաժողովին առնչվող տեղեկատվական թարմացումներին կարող եք հետևել գիտաժողովի ֆեյսբուքյան էջում՝ Heritage Preservation for a Sustainable Future։

Մասնագիտական արդյունավետ համագործակցության ակնկալիքով,

Հարգանքով՝
Գիտաժողովի կազմկոմիտե

Հավելված 2

1.	Մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետ	1 ապրիլի 2024թ.
2.	Մասնակցության հայտերի հաստատման վերջնաժամկետ	30 մայիսի 2024թ.
3.	Հոդվածների ներկայացման վերջնաժամկետ	1 նոյեմբերի 2024թ.
4.	Հոդվածների հաստատման վերջնաժամկետ	15 նոյեմբերի 2024թ.